# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԱՄՍՕՐԵԱՑ ԼՈՒՐԵՐ

◆ 1 Յունիս Կիր. — Ս. Հոգեգալստեան տօնին առթիւ Ս. Պատրիարք Հայրը հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց և քարոզեց Ս. Փրկչի վանուց բացօթեայ գաւթին մէջ՝ Աւագ Սեղանին վրայ։ Կէսօրէն վերջ Ն. Ամենապատուութիւնը նախագահեց Ս. Փրկչի գերեզմանատան մէջ կատարուած ընդհանուր և հանդիսաւոր Հոգեհանգստեան պաշտօնին։

◆ 4 Յունիս Դշ. — Ս. Պատրիարք Հայրը հեռաձայնով Պաղեստինէն տեղեկացաւ թէ Կ. Պոլսոյ Նախկին պատրիարք Գեր. Տ. Զաւէն Սրբ. Արքեպս. Տէր Եղիայեան կարճատև անհանգստութենէ յետոյ իր մահկանացուն կնքած է առաւօտեան դէմ։

◆ 6 Յունիս Ուր. — Կէսօրէ առաջ, Հոգ. Տ. Հայկազուն, Տ. Հայրիկ և Տ. Միւռոն վարդապետները Լիտտայի օդակայանը գացին Երուսաղէմ փոխադրելու Հանգուցեալ Գերաշնորհ Տ. Զաւէն Արքեպս. Տէր Եղիայեանի մարմինը որ ըստ մասնաւոր կարգադրութեան օդանաւով հոն պիտի փոխադրուէր Պաղեստինէն։ Օդակայանին մէջ երկար սպասելէ յետոյ վերադարձան հաղորդելու թէ անակնկալ արկածի մը պատճառաւ օդանաւը գետին իջած է և մարմինը Լիտտա պիտի հասնի յաջորդ օրը։

— Երեկոյեան դէմ Ս. Աթոռ ժամանեց Գեր. Տ. Փառէն Եպս. Մելքոնեան, Կիլիկիոյ Կաթ. Աթոռի կողմէ մասնակցելու Հոգելոյս Զաւէն Արքեպիսկոպոսի յուղարկաւորութեան և թաղման արարողութեանց։ Գեր. Ս. Հայրը նոյն օրն իսկ «Հրաշափառ»ով առաջնորդուեցաւ Մայր Տաճար, ուր յայտնեց Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսի ողջոյններն ու օրհնութիւնները և օրհնեց ներկայ ժողովուրդը։

◆ 7 Յունիս Շբ. — Հոգելոյս Տ. Զաւէն Արքեպիսկոպոս Տէր Եղիայեանի մարմինը մասնաւոր մեռելատար ինքնաշարժով Լիտտայի օդակայանէն Երուսաղէմ փոխադրուեցաւ, առաջնորդութեամբ Հոգ. Տ. Հայկազուն, Հայրիկ և Միւռոն վարդապետներու, որոնք դարձեալ առաւօտուն Լիտտա գացած էին այդ նպատակով։ Անոնց կ'ընկերանար Պաղեստինի Առաջն. Փոխանորդ Տ. Գրիգոր Աւագ Քհնյ. Տէր Յակոբեան որ Պաղեստինէն Լիտտա համբորդած էր Հոգելոյս Սրբազանի դագաղին հետ։ Վանքի աւագ դրան առջև Միաբանութեան և ժառանգաւորաց աշակերտներու թափօրով և հոգեհանգստեան պաշտօններով դագաղը առաջնորդուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճար։

◆ 8 Յունիս Կիր. — Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ հոգեհանգստեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Հոգելոյս Գեր. Տ. Զաւէն Արքեպս. Տէր Եղիայեանի համար։ Պատարագիչն էր Գեր. Տ. Փառէն Եպս. Մելքոնեան։ Ս. Պատրիարք Հայրը կատարեց օծման արարողութիւնը և խօսեցաւ դամբանականը՝ որուն ամփոփումը հետևեալն է. —

«Սգաւոր է Հայաստանեայց Եկեղեցին, վանքը, այսօր ցուրտ հողին պիտի յանձնուի իր նուիրապետութեան բարձրաստիճան զաւակներէն մին՝ Գերաշնորհ Տ. Զաւէն Ս. Արքեպս. Տէր Եղիայեան, Նախկին պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ։

«Սգաւոր է այդ պատրիարքական Աթոռը ի սփիւռս աշխարհի ցրուած իր բոլոր զաւակներով. սգաւոր են Արմաշի Դպրեվանքի նախկին սաները և բոլոր անոնք՝ որոնք աշխարհական և քահանայական կոչերով ուղղակի վայելած են Հոգելոյս Սրբազանի սէրն ու գուրգուրանքը։ Այս համատարած մեծ սուգին ծանրութիւնը բնականաբար ամենէն աւելի կը զգանք մենք որ իր կնքուած դագաղին շուրջ հաւաքուած ենք։ Ո՜վ կրնայ նայիլ այդ դագաղին ու չզգալ ծանրութիւնը այն խաչին՝ որ Հանգուցեալ Սրբազանինը եղաւ։ Ո՜վ կրնայ անոր նայիլ ու չվերյիշել այն արհաւիրքի աղէտները, որոնք լափեցին իր զաւակներուն մեծ մասը, և չորս հովերուն ցրուեցին մնացորդները։ Ո՜վ կրնայ զսպել ինչուներու այն ողբը որ կը բարձրանայ առ Աստուած, որ կը փոթորկէ մեր քրիստոնէական խղճմտանքը, կը պատռէ մեր կուրծքը, կը մթագնէ մեր աչքերը և կ'ընկղմէ մեզ սուգի անդունդներուն մէջ։ Ո՞վ կրնայ չզգալ այս բոլորը և աւելին երբ գիտէ թէ ինչո՛ւ և ինչպէս կ'ըլլայ որ Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքին դագաղը հոս կը գտնուի, միայն մեր աչքերուն առջև։ Ինչո՞ւ հոս չեն իր միլիոնաւոր զաւակներու ներկայացուցիչները. ինչո՞ւ յուղարկի չեն եկած իր Աթոռի հազարաւոր հոգևորականներու ներկայացուցիչները։ Ո՞ւր են Արմաշցիները, և ինչո՞ւ չեն հնչեր հազարաւոր եկեղեցիներու զանգակները։ Ահա մեր սուգին անհագնութիւնը, որ կը բըրգանայ այս դագաղին շուրջ։ Մերն է սուգին ծանրութիւնը, այո՛, բայց և մերն է նաև ստուերլացոյն մխիթարութիւնը՝ որ Հոգելոյս Սրբազանը այս [illegible] յետոյ և աշխարհէն լքուած, տարիներով Տիգրիսի ափին, հիւանդութիւններու ճիրաններուն մէջ, իր մահկանացուն կնքելէ յետոյ, Աստուածային նախախնամութեամբ Երուսաղէմ կը հասնի այս Առաքելական Աթոռի՝ Մայր Տաճարի կամարներուն տակ կը հանգչի. իր յուղարկաւորութեան Ս. Պատարագը կը մատուցուի Արմաշի աւագ և Գերապատիւ սաներէն միոյն կողմէ։ Կը հանգչի հոն ուր կը սաւառնին հոգիները իր սիրելի ուսուցիչներուն և դասընկերներուն, Մաղաքիա Օրմանեանի, Եղիշէ Դուրեանի, Բաբգէնի և Թորգոմի ու պիտի երթայ հանգչի ի շարս պատրիարքներու Ս. Աթոռոյս՝ առընթեր անմահանուն Եղիշէի։ Օրհնեալ է Աստուած և օրհնեալ է իր ողորմութիւնը անսահման։ Վտարանդի ու տառապական բայց օծեալը Տիրոջ, որ թերևս իր գերեզմանին մէջ նոյնիսկ հանգիստ պիտի չունենար։ Պիտի հանգչի իր արժանավայել տապանին մէջ և իր շիրիմը պիտի ըլլայ նաև շիրիմը բոլոր այն անշիրիմ եկեղեցականներուն որոնք նահատակուեցան իր պատրիարքութեան շրջանին»։

Նորին Ամենապատուութիւնը յետոյ դրուատելով Հոգելոյս Սրբազանի կեանքն ու գործունէութիւնը, մի առ մի յիշեց անոր կատարած պաշտօնները, Արմաշէն մինչև պատրիարքական Աթոռ և անկէ յետոյ մինչև իր մահը։ Իր դամբանականի վերջաւորութեան մաղթանքներ մատոյց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի արևշատութեան համար, նոյնպէս Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետի եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքական Աթոռի անսասանութեան համար, յատկապէս աղօթելով որ շուտով վերցուի անոր սև քողը։

Կէսօրէ առաջ, ժամը 11ին, կատարուեցաւ Հանգուցեալի յուղարկաւորութեան և թաղման արարողութիւնը։ Կը նախագահէր Ս. Պատրիարք Հայրը՝ պատարագի զգեստով։ Ներկայ էին Երուսաղէմի բոլոր հոգևոր պետերու ներկայացուցիչները և Երուսաղէմի Վսեմ. Կառավարչի Ներկայացուցիչը՝ Պր. Գավարչի։ Արարողութեան աւարտին յունաց Ս. Պատրիարքի ներկայացուցիչ Գեր. Եպիսկոպոսը յունարէն լեզուով հոգեհանգստեան աղօթք կարդաց, որմէ ետք՝ հանդիսաւոր թափօրով և ժողովուրդի խուռն բազմութեան մասնակցութեամբ՝ դագաղը փոխադրուեցաւ Ս. Փրկիչ և ամփոփուեցաւ Ս. Պատրիարքաց գերեզմաններու բաժնին մէջ։ Զկնի յուղարկաւորութեան Ս. Պատրիարք Հայրը պատրիարքարանի դահլիճին մէջ ընդունեց Միաբանութեան և ազգայնոց ցաւակցութիւնները։

digitised by A.R.A.R.@